ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարի Պետություն (Դոհա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կատարի Պետություն (Դոհա), 2024 թվականի հոկտեմբերի 29-ից 31-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Կատարի Պետության սոցիալական զարգացման և ընտանեկան հարցերով նախարար Մարիամ բինթ Ալի բին Նասսեր Ալ-Միսնադ

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն «Ընտանիք և ժամանակակից մեգաթրենդներ» խորագրով համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովին մասնակցել է տարբեր երկրներից ժամանած ավելի քան 2000 անձ՝ բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական առաջնորդներ, նախարարներ, քաղաքականություն մշակողներ, գիտնականներ, երիտասարդներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք:

   Միջոցառումը նպատակ ուներ ստեղծել հարթակ քաղաքականություն մշակողների և այլ շահագրգիռ կողմերի համար՝ ներգրավելու և քննարկելու ընտանիքի վրա ունեցած ժամանակակից մեգաթրենդների ազդեցությունը: Այն նաև ուղղված էր Կատարում, տարածաշրջանում և աշխարհում առողջ, կրթված ու մշակութային հասարակությունների ստեղծմանը՝ հիմնված ամուր և համախմբված ընտանիքների վրա: Ըստ այդմ, համաժողովի ընթացքում նախատեսված քննարկումները հիմնականում ծավալվում էին ժողովրդագրական փոփոխության, միգրացիայի և քաղաքաշինության, տեխնոլոգիական և կլիմայի փոփոխությունների ուղղություններով:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Դոհայում անցկացվող «Ընտանիք և ժամանակակից մեգաթրենդներ» թեմայով համաժողովի շրջանակում մասնակցել եմ Ընտանիքի քաղաքականությանը

նվիրված նախարարական նիստին: Քննարկմանը մասնակցում էին նաև Իրանի Իսլամական Հանրապետության Կանանց և ընտանիքի հարցերով փոխնախագահ Զահրա Բեհրուզ Ազարը, Մավրիտանիայի սոցիալական հարցերի, երեխաների և ընտանիքի նախարար Սաֆիյա բինտ Ինտահը, Պաղեստինի սոցիալական զարգացման նախարար Սամահ Համադը, Լիբիայի սոցիալական հարցերի նախարար Վաֆա Աբու Բաքր Ալ-Քիլանին: Նիստի ընթացքում ներկայացվեցին ընտանիքների հզորացմանն ուղղված տարբեր երկրների քաղաքականությունները, քննարկվեցին առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարմանն ուղղված քայլերը:

Ելույթումս ընդգծել եմ ընտանիքի դերը պետության զարգացման գործընթացում՝ նշելով, որ ՀՀ քաղաքականությունը շարունակում է ուղղված լինել երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, ծնելիության խրախուսմանը, ինչպես նաև բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքների շրջանակի ընդլայնմանը: Շեշտել եմ նաև, որ այս տեսլականի իրականացման նպատակով մշակվել է ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարությունը, որով սահմանված գերակայություններից մեկն ուղղված է ընտանիքի բարեկեցությունը խթանող միջավայրի ստեղծմանը: Նշել եմ, որ ոլորտում առկա մարտահրավերների հաղթահարմանը զուգահեռ նախատեսվում է ներդնել երեխայի նպատակային պլանավորմանն աջակցող խթաններ, ստեղծել մայրերի առողջության պահպանման բարելավված ծառայություններ՝ ստեղծելով կրթական և աշխատանքային ճկուն հնարավորություններ հղիության ու հետծննդաբերական շրջանում: Այս համատեքստում շեշտել եմ նաև ընտանիքների տնտեսական հզորացմանը, ակտիվ, առողջ և արժանապատիվ ծերության պայմանների ապահովմանը, էմիգրացիայի հանգեցնող դրդապատճառների նվազեցմանը և բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալի ձևավորմանն ուղղված աշխատանքների անհրաժեշտությունը:

Մասնակցել եմ նաև «Հաղթահարելով աղքատության շրջափուլը» խորագրով պանելային քննարկմանը: Միջոցառման շրջանակում ելույթ ունեցավ նաև Ռուանդայի առաջին տիկին Ն.Գ. Ջինեթ Նիրամոնգի Կագամեն. պանելային քննարկմանը մասնակցում էին Հարավային Աֆրիկայի Պրետորիայի համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Զիթա Մոկոմանեն և «Education Above All» (EAA) հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Ֆահադ Ալ Սուլեյթին:

Պանելային քննարկման ընթացքում մասնակիցները ներկայացրեցին աղքատության հաղթահարմանն ուղղված իրենց երկրների փորձը, սահմանված առաջնահերթություններն ու նախատեսվող քայլերը:

Անդրադառնալով աղքատության հաղթահարմանն ուղղված ՀՀ քաղաքականությանը՝ այս համատեքստում ընդգծել եմ ընտանիքների կայուն զբաղվածության ապահովման և տնտեսական զորեղացման կարևորությունը:

Նշել եմ, որ պետության կողմից իրականացվող աշխատանքների հիմքում ոչ միայն ընտանիքներին աջակցություն տրամադրելն է, այլև նրանց կարողությունները բարելավելը, կյանքի տարբեր փուլերում անհրաժեշտ ծառայություններ մատուցելն ու նրանց կենսամակարդակը բարձրացնելը, և այս տեսլականի իրագործմանն են ուղղված նաև ՀՀ զբաղվածության և ժողովրդագրության ռազմավարությունները, որոնց առանցքում մարդկային կապիտալի զարգացմանը նպաստող միջավայրի ստեղծումն է:

Հանդիպումներ

- Հանդիպում եմ ունեցել Մարիամ բինթ Ալի բին Նասսեր Ալ-Միսնադի հետ, որի ընթացքում քննարկել ենք հավասար հնարավորությունների ապահովման, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Ներկայացնելով հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում ՀՀ կողմից սահմանված առաջնահերթություններն ու այդ ուղղություններով իրականացվող աշխատանքները, մասնավորապես, ընդգծել եմ Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդնման ու e-disability.am հարթակի գործարկման կարևորությունը:
  Ոլորտային մի շարք կարևոր թեմաներից զատ՝ քննարկել ենք Հայաստանում ու Կատարում աջակցող միջոցների արտադրությամբ և զարգացմամբ զբաղվող ընկերությունների վերապատրաստման ու փորձի փոխանակման հնարավորությունը, ինչը երկուստեք թույլ կտա նպաստել աջակցող միջոցների որակի բարձրացմանը:
  Քննարկել ենք նաև խնամատարության ինստիտուտի ուղղությամբ համագործակցության տարբերակները: Ներկայացրել եմ ինստիտուտի զարգացմանն ուղղված ՀՀ քաղաքականությունը և նշել, որ վերջինիս կայացումը շարունակում է լինել ոլորտային առաջնահերթություններից:
  Հանդիպման ընթացքում դիտարկել ենք նաև քննարկված թեմաների շուրջ Հայաստանում ու Կատարում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համաժողովներ և միջոցառումներ կազմակերպելու հնարավորությունը:
  Ընդգծել ենք ընտանիքի ինստիտուտի հզորացմանն ուղղված աշխատանքների շարունակականության ապահովումը. այս համատեքստում ներկայացրել եմ Կառավարության կողմից նոր ընդունված ՀՀ ժողովրդագրության ռազմավարությունը՝ նշելով, որ ընտանիքի բարեկեցությունը խթանող միջավայրի ստեղծումը փաստաթղթով սահմանված չորս հիմնական ուղղություններից մեկն է:
  Հանդիպմանը մասնակցել է նաև Կատարի Պետությունում ՀՀ գործող դեսպան Արմեն Սարգսյանը:

- Հանդիպել եմ Կատարի առաջատար ընկերություններից Snoonu-ի համահիմնադիր և գործադիր տնօրեն Համադ Մուբարակ Ալ-Հաջրիի հետ: Քննարկել ենք փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում՝ երկու երկրներում առկա աշխատուժի լիարժեք օգտագործման և կարողությունների զարգացման վերաբերյալ: Երկուստեք պատրաստակամություն հայտնեցինք շարունակելու իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ՝ արդյունավետ համագործակցության և փորձի փոխանակման ուղղություններով:
  Աշխատուժի ակտիվացման ուղղությամբ աշխատանքները բխում են նաև վերջերս ստորագրված «ՀՀ կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին համաձայնագրի» շրջանակում ստանձնած պարտավորություններից:

- Հանդիպում եմ ունեցել Ընտանիքի համաշխարհային կազմակերպության նախագահ Դեյսի Նոելի Վեբեր Կուստրայի և ընկերության փոխնախագահ Իսիդրո դե Բրիտոյի հետ, որի ընթացքում քննարկել ենք ընտանիքի հզորացման քաղաքականությանը վերաբերող մի շարք հարցեր: Այս համատեքստում ներկայացրել եմ ՀՀ ժողովրդագրության նոր ռազմավարությունը, փաստաթղթով սահմանված հիմնական ուղղությունները, որոնք հնարավորություն կտան նպաստել ընտանիքների բարեկեցությունը խթանող միջավայրի ստեղծմանը, հզորացմանն ու զարգացմանը:
  Դեյսի Նոելի Վեբեր Կուստրան, ում կողմից ղեկավարվող կազմակերպության գործունեության առանցքում ընտանիքի զորեղացմանն ուղղված քաղաքականությունների, ծրագրերի, նախագծերի և ծառայությունների մշակման գործընթացում աջակցելն է, պատրաստակամություն հայտնեց դիտարկել ՀՀ ժողովրդագրության ռազմավարությունը, արձագանքել և քննարկել համագործակցության շրջանակը:
  Հանդիպման ընթացքում կարևորել ենք նաև լավագույն փորձի փոխանակման և, ըստ անհրաժեշտության, տեղայնացման դերը ոլորտի զարգացման գործում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կատարի Պետության սոցիալական զարգացման և ընտանեկան հարցերով նախարար Մարիամ բինթ Ալի բին Նասսեր Ալ-Միսնադի հետ կայացած հանդիպման շրջանակում վերջինս նշել է, որ առաջիկա ժամանակահատվածում Կատարի Պետության կողմից ստորագրման կներկայացվի ոլորտային համագործակցության զարգացման հուշագիրը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Մարիամ բինթ Ալի բին Նասսեր Ալ-Միսնադի հետ քննարկել ենք Կատարի Պետությունում Հայաստան-Կատար համագործակցության շրջանակում խնամատարության ինստիտուտին նվիրված համաժողով իրականացնելու հնարավորությունը, որտեղ ընդունող կողմը կլինի կատարական կողմը, իսկ համակազմակերպիչները՝ Կատարի Պետությունը և Հայաստանի Հանրապետությունը: Նույն թեմայով տարածաշրջանային համաժողով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ Հայաստանում տեղի է ունեցել 2023 թվականի հոկտեմբերին՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ներգրավված միջազգային և տեղական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

11/4/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ստորագրությունը, ամսաթիվը:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն*

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը *ՀՀ վարչապետի 24.10.2024թ. N 954-Ա որոշում*

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը *Կատարի Պետություն (Դոհա)*

5. Գործուղման ժամկետները *29.10.2024թ.-31.10.2024թ.*

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

ճանապարհածախս, գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային Նմուշառումների վճար	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր (նկարագրել)	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

11/4/2024

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**